

ՀՀ ՇՄՆ Անտառային կոմիտեի «Հայանտառ» ՊՈԱԿ-ի
«Վայոց ձորի անտառտնտեսություն» մասնաճյուղի «Ջերմուկի անտառպետության»
տարածքում 6,5 հա տարածքի անտառապատման աշխատանքների շրջակա
միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման

Հ Ա Յ Տ

Պատվիրատու՝ «Ջինջ Արփա» ՍՊԸ



ԵՐԵՎԱՆ 2020

ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՏԵՐՄԻՆՆԵՐ

Ներկայացվող սահմանումները և եզրույթները (տերմիններ) բերվում են ՀՀ բնապահպանական ոլորտի օրենքներից և նորմատիվ փաստաթղթերից:

Շրջակա միջավայր՝ բնական և մարդածին տարրերի (մթնոլորտային օդ, ջրեր, հողեր, ընդերք, լանդշաֆտ, կենդանական ու բուսական աշխարհ, ներառյալ՝ անտառ, բնության հատուկ պահպանվող տարածքներ, բնակավայրերի կանաչ տարածքներ, կառույցներ, պատմության և մշակույթի հուշարձաններ) և սոցիալական միջավայրի (մարդու առողջության և անվտանգության), գործոնների, նյութերի, երևույթների ու գործընթացների ամբողջությունը և դրանց փոխազդեցությունը միմյանց ու մարդկանց միջև.

շրջակա միջավայրի վրա ազդեցություն՝ հիմնադրությային փաստաթղթի գործողության կամ նախատեսվող գործունեության իրականացման հետևանքով շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա հնարավոր փոփոխությունները.

Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատական՝ երկրաբանական ուսումնասիրությունների և օգտակար հանածոների արդյունահանման ընթացքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունների բացահայտում և գնահատում **նախատեսվող գործունեություն՝** շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություն ունեցող ուսումնասիրություն, արտադրություն, կառուցում, շահագործում, վերակառուցում, ընդլայնում, տեխնիկական և տեխնոլոգիական վերազինում, վերապրոֆիլավորում, կոնսերվացում, տեղափոխում, լուծարում, փակում.

ձեռնարկող՝ սույն օրենքի համաձայն՝ փորձաքննության ենթակա հիմնադրությային փաստաթուղթ մշակող, ընդունող, իրականացնող և (կամ) գործունեություն իրականացնող կամ պատվիրող պետական կառավարման կամ տեղական ինքնակառավարման մարմին, իրավաբանական կամ ֆիզիկական անձ.

ազդակիր համայնք՝ շրջակա միջավայրի վրա հիմնադրությային փաստաթղթի կամ նախատեսվող գործունեության հնարավոր ազդեցության ենթակա համայնքի (համայնքների) բնակչություն՝ ֆիզիկական և (կամ) իրավաբանական անձինք.

շահագրգիռ հանրություն՝ փորձաքննության ենթակա հիմնադրությային փաստաթղթի ընդունման և (կամ) նախատեսվող գործունեության իրականացման առնչությամբ հետաքրքրություն ցուցաբերող իրավաբանական և ֆիզիկական անձինք.

գործընթացի մասնակիցներ՝ պետական կառավարման ու տեղական ինքնակառավարման մարմիններ, ֆիզիկական ու իրավաբանական անձինք, ներառյալ՝ ազդակիր համայնք, շահագրգիռ հանրություն, որոնք, սույն օրենքի համաձայն, մասնակցում են գնահատումների և (կամ) փորձաքննության գործընթացին.

հայտ՝ ձեռնարկողի կամ նրա պատվերով կազմած հիմնադրությամբ փաստաթղթի մշակման և (կամ) նախատեսվող գործունեության նախաձեռնության մասին ծանուցման փաթեթ.

բնության հատուկ պահպանվող տարածք՝ ցամաքի (ներառյալ՝ մակերևութային ու ստորերկրյա ջրերը և ընդերքը) և համապատասխան օդային ավազանի՝ սույն օրենքով գիտական, կրթական, առողջարարական, պատմամշակութային, ռեկրեացիոն, զբոսաշրջության, գեղագիտական արժեք են ներկայացնում, և որոնց համար սահմանված է պահպանության հատուկ ռեժիմ.

ազգային պարկ՝ բնապահպանական, գիտական, պատմամշակութային, գեղագիտական, ռեկրեացիոն արժեքներ ներկայացնող միջազգային և (կամ) հանրապետական նշանակություն ունեցող տարածք, որը բնական լանդշաֆտների ու մշակութային արժեքների զուգորդման շնորհիվ կարող է օգտագործվել գիտական, կրթական, ռեկրեացիոն, մշակութային և տնտեսական նպատակներով, և որի համար սահմանված է պահպանության հատուկ ռեժիմ.

պետական արգելավայր՝ գիտական, կրթական, պատմամշակութային, տնտեսական արժեք ներկայացնող տարածք, որտեղ ապահովվում են էկոհամակարգերի և դրանց բաղադրիչների պահպանությունը և բնական վերարտադրությունը.

պետական արգելոց՝ գիտական, կրթական, պատմամշակութային արժեք ներկայացնող առանձնահատուկ բնապահպանական, գեղագիտական հատկանիշներով օժտված միջազգային և (կամ) հանրապետական նշանակություն ունեցող տարածք, որտեղ բնական միջավայրի զարգացման գործընթացներն ընթանում են առանց մարդու անմիջական միջամտության.

բնության հատուկ պահպանվող տարածքի պահպանման գոտի՝ տարածք, որի ստեղծման նպատակն է սահմանափակել (մեղմացնել) բացասական մարդածին ներգործությունը բնության հատուկ պահպանվող տարածքների էկոհամակարգերի, կենդանական ու բուսական աշխարհի ներկայացուցիչների, գիտական կամ պատմամշակութային արժեք ունեցող օբյեկտների վրա.

լանդշաֆտ՝ աշխարհագրական թաղանթի համասեռ տեղամաս, որը հարևան տարածքներից տարբերվում է երկրաբանական կառուցվածքի, ռելիեֆի, կլիմայի, հողաբուսական ծածկույթի և կենդանական աշխարհի ամբողջությամբ.

հող՝ երկրի մակերևույթում բիոտիկ, աբիոտիկ և մարդածին գործոնների երկարատև ազդեցության արդյունքում առաջացած ինքնուրույն բնագիտապատմական հանքաօրգանական բնական մարմին՝ կազմված կոշտ հանքային և օրգանական մասնիկներից, ջրից ու օդից և ունի բույսերի աճի ու զարգացման համար համապատասխան պայմաններ ստեղծող յուրահատուկ գենետիկամորֆոլոգիական հատկանիշներ ու հատկություններ.

խախտված հողեր՝ առաջնային տնտեսական արժեքը կորցրած և շրջակա միջավայրի վրա բացասական ներգործության աղբյուր հանդիսացող հողեր.

հողի բերրի շերտ՝ հողային ծածկույթի վերին շերտի բուսահող, որն օգտագործվում է հողերի բարելավման, կանաչապատման, ռեկուլտիվացման նպատակներով.

հողի պոտենցիալ բերրի շերտ՝ հողային պրոֆիլի ստորին մասը, որն իր հատկություններով համընկնում է պոտենցիալ բերրի ապարների (բուսականության աճի համար սահմանափակ բարենպաստ քիմիական կամ ֆիզիկական հատկություններ ունեցող լեռնային ապարներ) հատկություններին.

հողածածկույթ՝ երկրի կամ դրա ցանկացած տարածքի մակերևույթը ծածկող հողերի ամբողջությունն է.

հողի բերրի շերտի հանման նորմեր՝ հողի հանվող բերրի շերտի խորությունը (սմ), ծավալը (մ³), զանգվածը (տ).

ռեկուլտիվացում՝ խախտված հողերի վերականգնմանն ուղղված (օգտագործման համար պիտանի վիճակի բերելու) միջոցառումների համալիր, որը կատարվում է 2 փուլով՝ տեխնիկական և կենսաբանական.

բնապահպանական կառավարման պլան՝ բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող միջոցառումներ և դրանց իրականացման մշտադիտարկման ցուցիչներ, որոնք հստակ են և չափելի՝ որոշակի ժամանակի ընթացքում.

բնության հուշարձան, բնության հատուկ պահպանվող տարածքի կարգավիճակ ունեցող գիտական, պատմամշակութային և գեղագիտական հատուկ արժեք

ներկայացնող երկրաբանական, ջրատերկրաբանական, ջրագրական, բնապատմական, կենսաբանական բնական օբյեկտ.

պատմության և մշակույթի անշարժ հուշարձաններ՝ պետական հաշվառման վերցված պատմական, գիտական, գեղարվեստական կամ մշակութային այլ արժեք ունեցող կառույցները, դրանց համակառույցներն ու համալիրները՝ իրենց գրաված կամ պատմականորեն իրենց հետ կապված տարածքով, դրանց մասը կազմող հնագիտական, գեղարվեստական, վիմագրական, ազգագրական բնույթի տարրերն ու բեկորները, պատմամշակութային և բնապատմական արգելոցները, հիշարժան վայրերը՝ անկախ պահպանվածության աստիճանից:

Կարմիր գիրք՝ «Կարմիր գիրքը միջազգային պահանջները բավարարող համահավաք փաստաթուղթ է, որում գրանցվում են տեղեկություններ հազվագյուտ, անհետացման եզրին գտնվող բույսերի և համակեցությունների կարգավիճակի, աշխարհագրական տարածվածության, կենսաբանական առանձնահատկությունների, էկոլոգիական պայմանների, ներկա վիճակի և պահպանման միջոցառումների մասին»:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման սույն հայտը կազմվել է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» 2014թ ՀՀ օրենքի և ՀՀ կառավարության որոշումների պահանջներին համապատասխան:

Անտառապատման աշխատանքներն իրականացվելու են «Զինջ Արփա» ՍՊԸ-ի կողմից՝ Հայաստան ՊՈԱԿ-ի և «Զինջ Արփա» ՍՊԸ-ի միջև 2014թ. մարտի 12-ին կնքված «Կանգուն ծառուտի հատման և արժեքի փոխհատուցման», 2014թ. ապրիլի 25-ին կնքված «Վնասի փոխհատուցման» և 2007թ. նոյեմբերի 27-ի «Անտառային տարածքի սահմանափակ օգտագործման իրավունքի /սերվիտուտ/» պայմանագրերի պահանջների կատարումն ապահովելու նպատակով:

ԱՆՏԱՌԱՊԱՏՄԱՆ ԴԵՐԸ ԵՎ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Անտառը կլիմայի անփոխարինելի կարգավորիչն է: Իր տերևային հսկայական զանգվածով գոլորշիացնելով մեծ քանակությամբ ջուր, անտառը բարձրացնում է օդի հարաբերական խոնավությունը, տարվա ընթացքում կանոնավորում մթնոլորտային տեղումների քանակը, իջեցնում ջերմաստիճանը, մեղմացնում քամիների կործանիչ ուժը, բարերար ազդեցություն թողնում շրջակա դաշտերի բերքատվության վրա: Անգնահատելի է անտառի հողապաշտպան ու ջրային ռեժիմի կարգավորիչ հատկությունները, որը շատ կարևոր է դառնում այնպիսի սակավանտառ երկրում, ինչպիսին Հայաստանն է: Այսպիսով, յուրաքանչյուր անտառապատման գործընթաց շատ կարևոր է մեր երկրի համար, հատկապես քաղաքամերձ հողակտորների վրա, քանի որ բացի անտառընդարձակումից, անտառը կատարում է սանիտարահիգիենիկ դեր և ունի գեղագիտական նշանակություն:

Այսպիսով, նախագծվող աշխատանքը շատ կարևոր է նախ որպես անտառվերականգնման աշխատանք, ինչպես նաև որպես քաղաքամերձ կանաչ գոտի: Անտառային տարածքների երկարատև ոչ ճիշտ շահագործման արդյունքում հսկայական վնաս է հասցվել էկոհամակարգին, որոնք հիմնականում կորցրել են ինքնավերարտադրման հատկությունները, տափաստանացվել են՝ վերածվելով քայքայված հատվածների: Ներկայումս Հայաստանի անտառածածկ տարածքների զգալի հատվածները ոչ միայն հատվել են, այլև երկարատև արածեցման տակ

պայմանագրի և 2007թ. նոյեմբերի 27-ի «Անտառային տարածքի սահմանափակ օգտագործման իրավունքի /սերվիտուտ/» պայմանագրերի պահանջների կատարումն ապահովելու նպատակով, իրականացնել անտառապատման աշխատանքներ /պայմանագրերի պատճենները կցվում են/:

Նշված աշխատանքները կատարելու համար Անտառային կոմիտեի կողմից անտառապատման է ներկայացվել «Հայանտառ» ՊՈԱԿ-ի «Վայոց Ձորի անտառտնտեսություն» մասնաճյուղի «Ջերմուկի անտառապետության» տարածքում 6,5 հա տարածք 10-րդ քառակուսու 28, 37, 38, 41 և 42-րդ անտառամասերում /անտառամասերի ընդհանուր գումարային մակերեսը 11,8 հա է, սակայն տնկման նպատակահարմար է 6,5 հա-ը, տարածքի մնացած տեղամասերը մասամբ անտառածածկ են, տաքսացիոն նկարագիրը կցվում է/:

Ըստ վիզուալ ուսումնասիրությունների տարածքում արհեստական մշակույթները եղել են մոնոդոմինանտ, բաղկացած միայն սոճուց: Ծառուտի կորստի վերաբերյալ ուղումնասիրություններ չեն իրականացվել: Այս հատվածի համար ըստ «Հայանտառ» ՊՈԱԿ-ի «Վայոց Ձորի անտառտնտեսություն» մասնաճյուղի անտառկառավարման պլանի նախատեսվում է անտառապատում 3330 տնկատեղ 1 հա հաշվով: Նախատեսվում են խառը տնկարկներ, խառնումը մաքուր շարքերով:

1.2 Նախատեսվող գործունեության բնութագիրը

«Անտառային կոմիտեի «Հայանտառ» ՊՈԱԿ-ի «Վայոց ձորի անտառտնտեսություն» մասնաճյուղի «Ջերմուկի անտառապետության» տարածքում 6,5 հա տարածքի անտառապատում» ծրագրի շրջանակներում նախատեսվում է 2020 թ. աշնանն իրականացնել անտառվերականգնման աշխատանքներ և մինչև անտառտնկարկը անտառի շարք փոխադրելը իրականացնել խնամքի աշխատանքներ:

Անտառվերականգնման համար որպես հիմնական ծառատեսակ ընտրվել է սոճի սովորական, իսկ որպես ուղեկցող ծառատեսակներ՝ վայրի պտղատուներ, լայնատերև սաղարթավոր տեսակներ:

1.3. Նախագծման նորմատիվ-իրավական հիմքը

«Ջինջ Արփա» ՍՊԸ-ն իր գործողություններում առաջնորդվելու է բնապահպանության բնագավառում ՀՀ ստանձնած միջազգային պարտավորություններով և ՀՀ

օրենսդրության այն պահանջներով, որոնք առնչվում են հանքարդյունահանման ոլորտին և շրջակա միջավայրի պահպանությանը: Դրանք են՝

ՀՀ Հողային օրենսգիրք

ՀՀ Զրային օրենսգիրք

ՀՀ Անտառային օրենսգիրք

„Բուսական աշխարհի մասին», ՀՀ օրենք

„Կենդանական աշխարհի մասին», ՀՀ օրենք

„Մթնոլորտային օդի պահպանության մասին», ՀՀ օրենք

„Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին», 2014թ-ի ՀՀ օրենք

„Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության ու օգտագործման մասին», ՀՀ օրենք:

Հայաստանի Հանրապետության «Անտառային» օրենսգիրք (24.10.2005թ.),

«Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը (27.11.2006թ.),

«ՀՀ բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի N 72-Ն որոշում,

«ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի N 71-Ն որոշում,

«ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 31.07.2014թ.-ի N 781-Ն որոշում,

«ՀՀ բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 14.09.2008թ.-ի N 967-Ն որոշում,

«Ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող մշտադիտարկումների իրականացման պահանջների, ինչպես նաև արդյունքների վերաբերյալ հաշվետվությունները ներկայացնելու կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 22.02.2018թ.-ի N 191-Ն որոշում:

Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերը՝

ՄԱԿ-ի «Կենսաբանական բազմազանության մասին» կոնվենցիա (Ռիո դե Ժան., 1992)

«Եվրոպայի վայրի բնության և բնական միջավայրի պահպանության մասին» կոնվենցիա (Բեռն, 1979 թ.).

«Լանդշաֆտների եվրոպական կոնվենցիա» (Ֆլորենցիա, 2000 թ.).

ՄԱԿ-ի «Անապատացման դեմ պայքարի...» կոնվենցիա (Փարիզ, 1994 թ.).

ՄԱԿ-ի «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիա (ՆյուՅորք, 1992 թ.).



ՄԱԿ-ի ԵՏՀ «Անդրսահմանային ենթատեքստում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման մասին» կոնվենցիա (Էսպո, 1991 թ.).

ՄԱԿ-ի ԵՏՀ «Շրջակա միջավայրի հարցերի առնչությամբ տեղեկատվության հասանելիության, որոշումների ընդունելու գործընթացին հասարակայնության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին» կոնվենցիա (Օրիուս, 1998 թ.).

2. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

2.1. Նախատեսվող գործունեության գտնվելու վայրը

Նախատեսվող տարածքը գտնվում է Հայաստանի Հանրապետության հարավ-արևելքում՝ Վայոց ձորի մարզում, նախկին Եղեգնաձորի և Վայքի տարածաշրջան-ներում, «Հայանտառ» ՊՈԱԿ-ի «Վայոց ձորի անտառտնտեսություն» մասնաճյուղի «Ջերմուկի» անտառապետության թիվ 10 քառակուսու տարածքում:



Տնտեսության գրասենյակը գտնվում է Եղեգնաձորում, մայրաքաղաքից 130կմ հեռավորության վրա:

Վայոց ձորի մարզը տարածքով Հայաստանի ամենափոքր մարզն է՝ 2308 քառակուսի կմ, բնակչության թիվը՝ 55800 (2009թ. հունվարի 1), որից 19300-ը՝ քաղաքային բնակչություն, 36500-ը՝ գյուղական:

Հարավից սահմանակից է Սյունիքի մարզին և Նախիջևանին, արևմուտքից՝ Արարատի մարզին, հյուսիսից՝ Գեղարքունիքի մարզին, արևելքից՝ Արցախին: Վայոց ձորը ձորերի ու կիրճերի, առուների ու գետերի, բարձր լեռների ու խորհրդավոր քարանձավների երկիր է: Բարձրությունը ծովի մակերևույթից տատանվում է 850 մ-ից (Արենի) մինչև 3500 մ (Գոգի լեռ): Այն իրենից ներկայացնում է բոլոր կողմերից լեռներով շրջապատված թասաձև մի գոգավորություն՝ բարդ ու խիստ մասնատված մակերևույթով: Ընդհանրապես Վայոց ձորին բնորոշ է լանդշաֆտի բազմազնությունը և ռելիեֆի գոտիականությունն ու կտրտվածությունը, որն էլ պայմանավորում է բուսական և կենդանական տեսակների բազմազնությունը: Մարզի ամբողջ տարածքով ձգվում են երկու խոշոր լեռնաշղթաները՝ Վայքի լեռնաշղթան՝ հարավից, և Վարդենիսի լեռնաշղթան՝ հյուսիսից:

Գոգավորության կենտրոնական մասում աչքի է ընկնում Վայոց սարը կամ Գիժ սարը, որը հանգած հրաբուխ է՝ 2 հրաբխային խառնարաններով: Նշանավոր լեռնագագաթներից են Գեղասարը, Վարդենիսը, Սուլեմասարը, Գոգի լեռը, Հարսնասարը: Դրանք զարդարում են Վայոց ձորի շատ բնակավայրերի բնապատկերները:

Վայոց ձորն ունի 44 համայնքներ՝ 3-ը քաղաքային, և 41-ը՝ գյուղական: Ունի 2308 կմ² մակերես՝ զբաղեցնելով Հայաստանի տարածքի 7.8 %-ը: Այն ընդգրկում է Մարզկենտրոնն է Եղեգնաձոր քաղաքը:

2.2. Մարզի ռելիեֆը, երկրաձևաբանությունը, հողերի բնութագիրը

ՀՀ Վայոց ձորի մարզը շրջապատված է բարձր լեռներով, ջրբաժան լեռնաշղթաներով, որոնք յուրահատուկ բնական պատնեշներ հանդիսանալով նրա և հարևան տարածքների միջև, այն դարձնում են աշխարհագրական մի ամբողջություն: Ժայռոտ և չոր տեղանքը, որի բարձրությունը տատանվում է 990-ից մինչև 3522 մետրի սահմաններում, ստեղծել է յուրահատուկ կենսաբազմազանություն: Տարածքում հոսող բազմաթիվ գետերը և նրանց վտակները սնուցում են հողը՝ այն պիտանի դարձնելով բազմատեսակ ծառեր և այգիներ աճեցնելու համար: Գետերի ափերին աճող վայրի ծաղիկները և մրգատու ծառերը, խառնվելով ժայռերի գույների հետ, ստեղծում են բազմերանգ բնապատկերներ:

Տարածքի երկրաբանական կառուցվածքը բավական բարդ է և հետաքրքիր: Արտակարգ խայտաբղետ է մարզի մակերևույթը: Հրաբխային ուժերը, երկրաշարժերը, Արփա գետի և դրա վտակների ջրերն առաջացրել են տարբեր ուղղություններով ձգվող բազմաթիվ լեռնաշղթաներ՝ մեծ ու փոքր գագաթներով, խորհրդավոր ձորեր, լեռնանցքներ, սարահարթեր, գոգավորություններ, դաշտեր, մարգագետիններ և բնական բազմապիսի կերտվածքներ, որի ամենավառ օրինակն է Ջերմուկի հիասքանչ ջրվեժը (71 մ): Կիրակոս Գանձակեցին հիշատակում է 735 թ երկրաշարժի մասին, երբ «40 օր երկիրը ցնցվում էր»:

Հետաքրքիր է Եղեգիսի հովիտը Շատին գյուղից վերև, որտեղ աղմկոտ գետը, փորելով հրաբխային կարծր ապարները, անդնդախոր կիրճ է առաջացրել: Հովիտի երկու կողմերում բխում են հանքային աղբյուրներ, որոնք էլ հիմնականում պահպանում են Եղեգիս գետի մակարդակը ամառվա չորային ամիսներին: Հովտով դեպի վերև՝ հսարլ բարձրանալիս մտնում ենք ալպյան և ենթաալպյան արոտավայրերի գոտի, որտեղ բնապատկերի հիմնական տարերն են մանրիկ լճերը, քարե չինգինները և բլրակները: Մարզը հարուստ է բազմամետաղների զգալի կուտակումներով:

Գոգավորության ցածրադիր մասը իր հողակլիմայական պայմաններով կարծես Արարատյան դաշտի շարունակությունը լինի. քարքարոտ լանջերին տարածված են սակավազոր, խճախառը հողեր, իսկ դրանցից վերև՝ բաց շագանակագույն հողեր: Վերջիններս բարենպաստ են այգեգործության համար, որի շնորհիվ մարզը հայտնի է դարձել իր խաղողների և գինիների տեսակներով: Ամենուրեք տարածված են այսպես կոչված «անհարմար» հողերը, որոնք կազմում են Վայոց ձորի հողային ֆոնդի համարյա կեսը, իսկ վարելահողերի բաժինը 14%-ից չի անցնում:

Մարզին բնորոշ է վերընթաց գոտիականությունը: Լանդշաֆտը կիսաանապատային է, չոր տափաստանային, լեռնատափաստանային, լեռնաանտառային և մարգագետնատափաստանային, մերձալպյան և ալպյան: Մարզին լանդլաֆտի բազմազանությամբ և ռելիեֆի գոտիականությամբ ու կտրվածությամբ է պայմանաորված ֆլորայի և ֆաունայի բազմազանությունը: Բնական հիմնական լանդլաֆտները կիսաանապատներն ու տափաստաններն են: Տիրապետում են լեռնաշագանակագույն և մարգագետնատափաստանային հողերը: Տարածքի 5,7 %-ը ծածկված է բնական անտառներով: Բնական հուշարձաններից կան բուրգեր, քարանձավներ, ջրվեժներ (Ջերմուկի, Հերիերի):

2.3. Մարզի կլիման

Վայոց ձորի կլիման աչքի է ընկնում չորությամբ ու ցամաքայնությամբ: Կլիմայի առանձնահատկությունը արևոտությունն է. տարվա 365 օրերից միայն 30-40 օրն է անարև: Իսկ արևափայլքի տևողությունն այստեղ ամենաերկարն է Հայստանում: Տեղումների միջին տարեկան քանակը 390-780 մմ: Ամենացածրադիր մասերում տարեկան տեղումները 300 մմ ավել չեն, ընդ որում ամենաառատ տեղումները լինում են ամռանը: Լեռների կատարային գոտում տեղումների քանակը գերազանցում է 700 մմ-ն: Միջին ջերմաստիճանը ամռան ամենատաք ամիսներին՝ +15-ից + 26 (կախված բարձրություններից), իսկ ձմռան ամենացուրտ ամիսներին՝ -3-ից մինչև -8 աստիճան ըստ ցելսիուսի: Օդի հարաբերական խոնավությունն առավելագույնը դիտվում է հունվարին՝ 67-75%, իսկ նվազագույնը՝ օգոստոսին՝ 39-62%: Ձյունածածկույթի բարձրությունը նախալեռներում լինում է 10-76 սմ, իսկ բարձր լեռներում՝ մինչև 2 մ:

Քամիները լեռնահովտային են, արտահայտված սեզոնային և օրեկան բնույթով: Տեղանքի խիստ կտրտված ռելիեֆը նպաստում է քամիների լեռնահովտային ցիրկուլյացիայի խիստ անհավասարաչափ լինելուն: Հիմնականում գերակշռում է հյուսիսային քամին:

ՀՀ տարածքում օդային ավազանի ֆոնային աղտոտվածությունը վերահսկվում է ՀՀ բնապահպանության նախարարության կողմից: Տրածքը գտնվում է Ջերմուկի առողջարանային գոտու հարևանությամբ, այստեղ չկան գործող արդյունաբերական և խոշոր գյուղատնտեսական ձեռնարկություններ, համապատասխանաբար օդային ավազանը չի կրում անտրոպոգեն զգալի ազդեցություն:

Դիտակայաններ կամ պասիվ նմուշառիչներ չեն տեղադրված և օդային ավազանի աղտոտվածության վերաբերյալ տվյալներ չկան: Ներկայացվող տեղանքում աղմուկի աղբյուր կարող են հանդիսանալ միայն տրանսպորտային միջոցները, սակայն քանի որ դրանց երթևեկության ինտենսիվությունը շատ ցածր է, կարելի է ենթադրել, որ աղմուկի մակարդակը նույնպես բարձր չէ:


• Բնություն և բնական ռեսուրսներ


Մարզի ընդերքը հարուստ է հանքային ջրերի, ապակու հումքի /կվարցային ավազ/, ներկերի պիգմենտներ, ոսկու, կապարի, կրաքարի, կավի, ավազի, բազալտի, գրանիտի, մարմարի, ֆելզիտի պաշարներով: Վայոց ձորին մեծ հոչակ է բերել

հատկապես Մարտիրոսի ֆելզիտը: Այս քարատեսակը յուրահատուկ է դեղին, կապույտ, կանաչ երանգների վրա երևացող զարմանահրաշ պատկերներով:

• **Բուսական աշխարհ**

Վայոց ձորը առանձնահատուկ է բուսական աշխարհի բացառիկ բազմազանությամբ: Շատ են ռելիկտային և էնդեմիկ տեսակները: Առկա են ցածրակարգ սպորավոր բույսեր: Տեղական բուսատեսակների մեջ մեծ թիվ են կազմում դեղաբույսերը: Մեծ տեսակային բազմազանությունը պայմանավորված է ոչ միայն բնակլիմայական պայմաններով, այլև բարդ երկրաբանական կառուցվածքով: Բուսատեսակների մյուս տիպերը ընդգրկում են չորասեր (քսերոֆիլ), տափաստանային, անտառային, ալպիական և ջրային տեսակներ: Դրանք կազմող 155 տեսակի ծառերի ու թփերի մեծամասնությունը էնդեմիկ և հազվագյուտ տեսակներ են: Վայոց ձորի բույսերի շատ արժեքավոր տեսակներ գրանցված են Կարմիր գրքում և խիստ պահպանության կարիք ունեն: Նախատեսվող տարածքում Կարմիր գրքում գրանցված, ինչպես նաև էնդեմիկ տեսակներ չեն հանդիպել: **(աղբյուրը՝ «Հայաստան» ՊՈԱԿ-ի «Վայոց ձորի անտառտնտեսություն» մասնաճյուղի անտառկառավարման պլան, կայք՝ <http://forestcommittee.am/%d5%a1%d5%b6%d5%bf%d5%a1%d5%bc%d5%af%d5%a1%d5%bc%d5%a1%d5%be%d5%a1%d6%80%d5%b4%d5%a1%d5%b6-%d5%ba%d5%ac%d5%a1%d5%b6%d5%b6%d5%a5%d6%80/>):**





• **Գետեր և լճեր**

Վայոց ձորի տարածքը մասնատված է բազմաթիվ գետերով, գետակներով և հովիտներով, որոնք այստեղի բնաշխարհը դարձնում են անկրկնելի գեղեցիկ ու բազմազան: Հիմնական ջրային զարկերակն Արփա գետն է, որը մարզի տարածքում ունի 92 կմ երկարություն և 2080 քառ.մ ջրահավաք ավազան: Արփան Հայաստանի ջրառատ և արագահոս գետերից մեկն է: Այն սկիզբ է առնում Արցախի բարձրավանդակի հյուսիս արևմուտքից՝ 3200 մ բարձրությունից, և թափվում Արաքս գետը՝ Նախիջևանի և Թուրքիայի սահմանի վրա: Արփա գետն ունի բազմաթիվ վտակներ, որոնք տեղ-տեղ առաջացնում են սքանչելի ջրվեժներ՝ Ջերմուկ, Հերիեր: Ամենամեծ վտակը Եղեգիսն է: Եղեգիսի ձորակը յուրահատուկ է իր ինքնատիպ բնապատկերներով, բուսական և կենդանական աշխարհով: Այն հանդիսանում է Վայոց ձորի 4 հատուկ պահպանվող տարածքներից մեկը: Արփայի ջրերի մի մասը Սևանա լիճ փոխադրելու նպատակով կառուցվել է 48.3 կմ երկարություն ունեցող Արփա-Սևան ջրատար թունելը, որը սկիզբ է առնում Կեչուտի ջրամբարից: Արփա գետի ավազանը հարուստ է նաև բազմաթիվ սառնորակ աղբյուրներով, որոնց շրջակայքը հանգստի հանգրվան կարող է դառնալ էկո և արկածային տուրիստների համար: Շատ գեղեցիկ է նաև Հերիերի ջրամբարը՝ շրջապատված լեռներով, որոնց վրա փռված են գիհու նստրանտառներ: Վայոց ձորի տարածքում կան ևս 20-30 փոքր բնական լճակներ,

որոնցից մի քանիսն իրենց յուրահատուկ դիրքով և գեղեցկությամբ համարվում են բնության հուշարձաններ: Երևանից Արցախ և Իրան տանող մայուղու մի զգալի հատվածն անցնում է Արփայի կիրճով:

Արփայի մոտակայքում են գտնվում Արենիի եկեղեցին, Մոզ քաղաքի ավերակները, Գնդեվանքը, Ագարակաձորի կամուրջը, բազմաթիվ քարանձավներ և բնության այլ հուշարձաններ:

3. ՄԱՐԳԻ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ

Վայոց ձորի մարզը ՀՀ երկրագործական շրջաններից է: Մարզի տնտեսության ընդհանուր ծավալում գերակշռողը գյուղատնտեսությունն է: Գյուղացիական տնտեսությունները հիմնականում զբաղվում են անասնաբուծությամբ, որի արտադրանքը կազմել է գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալի 64.5 %-ը: Գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալում որոշակի տեսակարար կշիռ ունեն նաև թռչնաբուծությունը, խաղողագործությունը, պտղաբուծությունը և բանջարաբուծությունը:

Արդյունաբերության ոլորտում հիմնականում զարգացած են ոչ ոգելից ըմպելիքի՝ «Ջերմուկ» հանքային ջրերի և խաղողի գինու արտադրությունները: Զարգանում է հանքարդյունաբերությունը՝ Վայոց ձորի մարզում օգտակար հանածոների արդյունահանում իրականացվում է 1 մետաղական և 6 ոչ մետաղական հանքերից:

Մարզում առկա է էլեկտրաէներգիայի բաշխման զարգացած ցանց, որը միացված է նաև ԻԻՀ-ը և Արցախին:

Վայոց ձորի մարզում տնտեսական ակտիվության մակարդակը ամենաբարձրն է հանրապետությունում՝ գերազանցելով անգամ մայրաքաղաքին և Սյունիքին: Մարզի տնտեսապես ակտիվ բնակչության թվաքանակը կազմել է ընդհանուր բնակչության 75.7%, որը ամենաբարձր ցուցանիշն է հանրապետությունում: Աղքատության մակարդակը մարզի բնակչության 16,9% է:

Գործում են 15 նախադպրոցական հաստատություններ, 50 հանրակրթական, 1 երաժշտական, 4 արվեստի, 1 գեղարվեստի դպրոցներ և 2 մանկական ստեղծագործական կենտրոն, 4 մարզական դպրոց, 2 միջին-մասնագիտական ուսումնական հաստատություն և 1 ԲՈՒՀ ի՝ ՀՊՏՀ Եղեգնաձորի մասնաճյուղը, ոչ

պետական բուհ, 1 թանգարան, 44 գրադարան, ինչպես նաև 8 ամբուլատոր-պոլիկլինիկական հիմնարկներ:

4. ՄԱՐԶԻ ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐ

Հնագիտական պեղումները վկայում են, որ Վայոց Ձորի տարածքը բնակեցված է եղել սկսած դեռևս բրոնզի դարից: Այն նախկինում մտել է Մեծ Հայքի Սյունիք աշխարհի մեջ: Հանդիսացել է Սյունյաց թագավորների և Օրբելյան իշխանատան ամառանոց-բուժավայրը /մ.թ. I դ./: Առանձնակի նշանակություն ունի Արենիի քարանձավը, որտեղ պատմամշակութային շերտը թվագրվում է մ.թ.ա VI- IV հազարամյակներով: 2008 թվականին միջազգային հնագիտական արշավախմբի կողմից Վայոց ձորում կատարված նոր հատնագործությունը ևս մեկ անգամ ապացուցեց, որ Վայոց ձորը եղել է բնակատեղի ավելի քան 5000 տարվա վաղեմությամբ: Այստեղից է հայտնաբերվել աշխարհի ամենահին կաշվե կոշիկը՝ պատրաստած էնեոլիթի դարաշրջանում /մ.թ.ա. 3500/: Այն ամենահին կոշիկի նմուշն է, որ երբևէ գտնվել է ամբողջ աշխարհում: Կոշիկը պատրաստվել է մ.թ.ա. 3500-ական թվականներին՝ էնեոլիթի կամ պղնձաքար դարաշրջանում: Հայտնաբերման ժամանակ կոշիկը լցունված է եղել չորացած խոտով, որի նպատակը գիտնականներին դեռ պարզ չի: Կոշիկը եվրոպական չափային ստանդարտի համաձայն 37 համար է: Կոշիկը հետազոտել են Հայաստանի, Իռլանդիայի, ԱՄՆ-ի, Իսրայելի և Մեծ Բրիտանիայի գիտնականները: Կոշիկի տարիքը պարզել են Օքսֆորդի և Կալիֆոռնիայի լաբորատորիաներում:

Վայոց ձորը բնակատեղի է եղել վաղնջական ժամանակներից: Այս փաստի մասին վկայում են պեղումների ընթացքում հայտնաբերված նախամարդու իրերը, բրոնզե դարին վերաբեող դաշույնները, ճարմանդները, ապարանջանները, մատանիները և այլ իրեր: Մարզի տարածքում հաշվառված են 1373 պատմամշակութային հուշարձաններ: Ժայռերին հայտնաբերվել են բազում փորագրություններ, որսորդական տեսարաններով և զանազան կենդանիներով:

Արենիի Սբ. Աստվածածին եկեղեցին կառուցվել է 1321 թ. արքեպիսկոպոս Հովհաննես Օրբելյանի կողմից՝ ով նաև Նորավանքի պատվիրատուն է: Ճարտարապետը ժամանակի ճանաչված քանդակագործ ու մանրանկարիչ Մոմիկն է:

Արկազի Ս.Խաչ վանք: Վերնաշեն գյուղից 7կմ դեպի արևելք գտնվում է Արկազի Ս.Խաչ վանքը, որը Վայոց ձորի նշանավոր ուխտատեղի է և հիշատակվում է VIII

դարից: Վանքի ներկայիս եկեղեցին հիմնովին վերաշինվել է 1870-1871թթ.-ին:

Գլաձորի համալսարան: Գլաձորի համալսարանը եղել է միջնադարյան Հայաստանի նշանավոր ուսումնագիտական կաճառ Մեծ Հայքի Սյունիք նահանգի Վայոց ձոր գավառում (այժմ՝ Վայոց ձորի մարզի Վերնաշեն գյուղի մոտ): Որպես համալսարան՝ ձեռագրերում հիշատակվում է 1291թ.-ից: Հիմնադրվել է Թանադե վանքում՝ Խաղբակյան Պողոշ իշխանի (1223-84թթ.) նախաձեռնությամբ և Օրբելյան իշխանական տան ու Սյունյաց մետրոպոլիտոսության աջակցությամբ:

Գնդեվանքը գտնվում է Արփա գետի ձախ ափի ձորալանջին՝ Գնդեվազ գյուղից ներքև: X դ.-ում այն հիմնադրել Սյունյաց Սոփիա իշխանուհին, որպես ձորի ճգնավորների մենաստան: Վանքը ճգնավոր Սուփան Գնդունու անունով կոչվել է Գնդեվանք:

Եղեգնաձորի Ս. Աստվածածին (Ս. Սարգիս) եկեղեցին գտնվում է Վայոց Ձորի մարզի Եղեգնաձոր քաղաքում: Ս. Աստվածածնի անունը կրող եկեղեցին բազիլիկ եկեղեցի է, ունի մեկ ավագ խորան, երկու փոքրիկ ավանդատուն, մկրտության ավազան, և մի փոքրիկ զանգակատուն, եկեղեցին լուսավորվում է վեց փոքրիկ լուսամուտների և երկու ջահերի շնորհիվ:

Ջորաց Ս.Աստվածածին եկեղեցին գտնվում է Վայոց ձորի Եղեգիս գյուղի արևելյան բարձունքին: Ըստ արևելյան պատի արձանագրության կառուցել է (1303թ.-ից ոչ ուշ) Տարսայիճ իշխանի թոռը՝ Ստեփանոս Սյունյաց եպիսկոպոսը:

Թանադեի (Թանահատի) վանքը գտնվում է Վայոց ձորի մարզի Վերնաշեն գյուղից մոտ 7 կմ հարավ-արևելք: Պատմիչները հիշատակում են VIII դարից:

Մալիշկայի Սուրբ Աննա եկեղեցի Սուրբ Աստվածածնի մոր՝ Ս. Աննայի անունը կրող Հայաստանում միակ եկեղեցին գտնվում է Վայոց Ձորի մարզի Մալիշկա գյուղում:

Մոզրովի քարանձավը գտնվում է Մոզրով գյուղ տանող ճանապարհի աջ կողմում: Քարանձավը բացվել է ճանապարհա-շինարարական աշխատանքների ժամանակ: Քարանձավը խորանում է ավելի քան 300մ: Հսկայական սենյակներում ամենուրեք վերևից ու ներքևից ցցված են մեծ քանակությամբ շթաքարեր և պտկաքարեր:

Նորավանքը գտնվում է Ամաղու գյուղից 3կմ հյուսիս-արևելք, անդնդախոր կիրճի դժվարամատչելի դարավանդի վրա: Ըստ Ստեփանոս Օրբելյանի, սրբատեղի է եղել դեռ վաղ միջնադարում:

Շատիվանք 10-17-րդ դար: Շատիվանքը գտնվում է Շատին գյուղից մոտ 4կմ դեպի արևելք, համանուն ձորակի աջ ափին: Հիմնադրվել է Սյունյաց Սմբատ, Սահակ իշխանների և Սոփիա տիկնոջ հրամանով 929թ.-ին:

Հերիերի Սուրբ Սիոն վանք

Հերիերի Սուրբ Սիոն անապատը հիմնադրվել է վաղ միջնադարում: Կազմված է երկու եկեղեցուց և մատուռից:

Ջերմուկի Սուրբ Գայանե եկեղեցին գտնվում է Ջերմուկ քաղաքում: Կառուցվել է 2007 թվականին՝ Աշոտ Արսենյանի բարերարությամբ և օծվել է 2007 թ. նոյեմբերի 17-ին՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ձեռամբ:

Ջրահարսի վարսեր (Ջերմուկի մեծ ջրվեժ): Ջրվեժը ունի 72մ բարձրություն: Այն, թեքությամբ թափվելով Արփա գետի մեջ, աղջկա վարսեր է հիշեցնում: Ջուրն իրեն գրկող ժայռերի հետ շատ գեղեցիկ տեսարան է ստեղծում:

Սելիմի (Սուլեմայի) քարավանատունը կառուցվել է 1332թ. Չեսար Օրբեյանի իշխանության օրոք: Գտնվում է Սելիմի լեռնանցքի հարավային լանջին (2410մ):

Սմբատաբերդ (Ցաղաց Քարի բերդ) պաշտպանական համալիրը գտնվում է Արտաբույնք գյուղից արևելք:

Սպիտակավոր Սբ. Աստվածածին միջնադարյան վանքը գտնվում է Վերնաշեն գյուղից 7կմ հյուսիս:

Վայքի Սուրբ Տրդատ եկեղեցին կառուցվել է 2000թ.՝ բարերարությամբ ամերիկահայ բարերարներ Տեր և Տիկին Գալուստ և Էմմա Սողոյանների:

Ցաղաց Քար (Ցախացքարի վանք) միջնադարյան վանքային համալիրը գտնվում է Եղեգիս գյուղից 6կմ հյուսիս, բարձրադիր սարավանդի վրա:

5. ՆԱԽԱԳԾՎՈՂ ՏԱՐԱԾՔԻ ԱՃՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Նախագծվող տարածքը գտնվելով Ջերմուկ քաղաքի հարևանությամբ մտնում է համեմատաբար չոր անտառային գոտու մեջ, մնացորդային անտառների կազմում:

Ռելիեֆը այստեղ խիստ կտրտված է: Հիմնական լեռնային զանգվածներն են Ջանգեզուրի Բարգուշատի լեռները: Ամբողջ շրջանի տարածքի թեքվածությունը ուղղված է Կասպից ծովի կողմը, որի շնորհիվ այստեղ առաջանում են տեղումներ և որոշ չափով մեղմացնում կլիման (Казарян и др. 1974): Անտառներն այս գոտում

սկսվում են 900մ ծ.մ. և հասնում մինչև 2400 մ ծ.մ., և զբաղեցնում են խոնավ և չոր անտառների միջանկյալ տեղը (Махдатзе 1957, Тахтаджян 1941):

Հիմնական անտառային ֆորմացիաներն են՝ բոխին, կաղնին, կաղնե-բոխուտային, բոխուտա-կաղնուտային, որտեղ որպես խառնուրդ հանդես են գալիս թխկին, թեղին: Մաքուր բոխուտներ և կաղնուտներ հանդիպում են ծայրահեղ հազվագյուտ: Կաղնու տեսակներից մեր հետազոտվող տարածքում տարածված է *Quercus macranthera*, հանդիպում են *Acer campestre*, *Fraxinus excelsior*, *Pinus hamata*, *Malus orientalis* և այլն:

Այս գոտու անտառներին բնորոշ են տեսակներ, որոնք բացակայում են Անդրկովկասի այլ վայրերում՝ *Rosa zangezura*, *Grataegus zangezura*, *Lonicera bracteolaris* և այլն:


Կլիման այստեղ մեղմ է, համեմատաբար խոնավ ամբողջ տարվա ընթացքում: Տեղ-տեղ այն դառնում է ավելի կոնտինենտալ երկարատև ամառով և ցուրտ ձմեռով: Տեղումների միջին քանակը տատանվում է 500-765 մմ: Տարեկան միջին ջերմաստիճանը կազմում է 8,8°C : Ձմեռը ձյունառատ է, երկար, գերիշխում են հյուսիսային և հարավ-հյուսիսային քամիները: Գարունը անձրևային է, հաճախակի ցրտահարություններով: Ամառը մեղմ է, համեմատաբար կարճատև: Աշունը գալիս է շուտ, անձրևային է, հաճախ նկատվում են վաղ աշնանային ցրտահարություններ: Տարածքի խոտածածկը տարախոտային է, առկա են հացազգի էլեմենտներ: Տափաստանացված հատվածներում առկա է տիպիկ տափաստանային խոտածածկը: Շատ բնորոշ է ամբողջ շրջանի համար գիհու նոսրանտառները՝ բարձրախոտի ֆոնի վրա: Շրջանի բացարձակ նվազագույն ջերմաստիճանը կազմում է -25°C, և ծառաթփատեսակների աճի և զարգացման համար սահմանափակող գործոն է հանդիսանում սառնամանիքները: Ուստի տեսակների ընտրությունը հարկ է կատարել շատ զգուշորեն: Առաջին ցրտահարությունները լեռնային վերին գոտում նկատվում են հոկտեմբերի 10-11-ը, ցածրադիր մասերում՝ նույն ամսի վերջում: Վաղ գարնանային ցրտահարությունները նկատվում են մայիսի 1-10 -ը:

(աղբյուրը՝ «Հայաստան» ՊՈԱԿ-ի «Վայոց ձորի անտառնտեսություն»


մասնաճյուղի անտառկառավարման պլան, կայք՝

<http://forestcommittee.am/%d5%a1%d5%b6%d5%bf%d5%a1%d5%bc%d5%af%d5%a1%d5%bc%d5%a1%d5%be%d5%a1%d6%80%d5%b4%d5%a1%d5%b6-%d5%ba%d5%ac%d5%a1%d5%b6%d5%b6%d5%a5%d6%80/>):

Տարածքի իրադրության սխեման՝ արբանյակային պատկերի համադրմամբ



Տարածքի իրադրության սխեման՝ տրված կոորդինատային համակարգով



ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՏԱՐԱԾՔԻ ՀՈՂԱԳԻՏԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Տարածքը առանձնանում է չափավոր ցուրտ և խոնավ, իսկ հարավային դիրքադրության լանջերում ավելի չոր և մեղմ կլիմայական պայմաններով:

Ռելիեֆի և կլիմայի բազմազանությամբ պայմանավորված են բուսածածկի տիպերի և բուսատեսակների զանազանությունը:

Ուսումնասիրված տարածքում ներկայացված է անտառային դարչնագույն տափաստանացված (հետանտառային) հողատիպը: Վերջինս ձևավորվել է չափավոր տաք և ոչ կայուն խոնավությամբ առանձնացվող կլիմայի և թփուտներով ու խոտաբույսերով (տարախոտեր) հարուստ ծածկույթի տակ: Տարածքի հողերի ձևավորման համար որպես մայրապարներ ծառայել են հրաբխային ծագում ունեցող անդեզիտների, անդեզիտադացիտների, տրախիտների և տուֆաբրեկչաների կոնգլոմերատների էյուվիալ և դեյուվիալ բերվածքները, որոնք հաճախ հանդես են գալիս միախառնված:

Օդի տարեկան միջին ջերմաստիճանը կազմում է 8-11°C, 10°C-ից բարձր ջերմաստիճանների գումարը 2450-3600°C, մթնոլորտային տեղումների տարեկան միջին քանակը տատանվում է 450-500 մմ, խոնավացման գործակիցը՝ 0.5-0.8: Տեղանքի բարձրությունը ծովի մակերևույթից կազմում է մոտ 2200-2300 մետր, կողմնադրությունը 28-րդ անտառամասում՝ հարավ-արևելյան է, 37, 38, 41, 42-ում՝ հարավ-արևմտյան:

Նկարագրվող հողերի համար բնորոշ է գենետիկական հորիզոնների թույլ զատորոշումը: Անցման արտահայտվածության աստիճանը՝ հորիզոնների միջև սահմանը հստակ չէ և հնարավոր է առանձնացնել 3-5 սմ-ի սահմաններում:

Բնորոշվում են որոշակի կավայնացմամբ, կավավազային մեխանիկական կազմով, առկա է հողային հորիզոնի երանգավորում՝ պայմանավորված տարբեր գույների բծերի երանգների զուգակցումով և հիմնական ֆոնի վրա տարածմամբ: Այն վկայում է հողային զանգվածում տարբեր նյութերի դիֆերենցման մասին: Ստրուկտուրային տարրերը իրենց չափսերով բավականին տարբեր են՝ ունեն բազմազան ձևեր ու տարբեր տրամագիծ: Ագրեգատների բարձր ջրակայունությամբ հատկապես առանձնանում են վերին ճնային և հումուսով հարուստ հորիզոնները:

Ստորին հորիզոններում կառուցվածքային ագրեգատների ջրակայունությունը կտրուկ նվազում է:

Հողի կազմությունը արտահայտվում է մասնատվածությամբ, ճեղքայնությամբ և խտության արտաքին արտահայտվածությամբ: Հողի կազմությամբ կարելի է պատկերացում կազմել հողում ընթացող պրոցեսների մասին: Այսպես, հողում ճեղքայնությունը ձևավորվում է վերջինիս ծավալի կտրուկ փոփոխությունների դեպքում՝ կապված կավային ուժեղ ապարների փոփոխական խոնավացման և չորացման հետ: Որոշակի չափսի և ձևի խոր խոռոչների գոյությունը վկայում է մկների, խլուրդների, որդերի և միջատների գործունեության մասին:

Հողերի դաշտային նկարագրության ժամանակ կարևոր է նշել նաև տարբեր բույսերի արմատների տարածման խորությունները և խտությունը, այստեղ խոտաբույսերի արմատները կենտրոնացված են կտրվածքի վերին հորիզոններում:

Հողի մեջ բույսերի արմատների տարածումը գնահատվել է վիզուալ մեթոդով: Արդյունքում գնահատվել է արմատների հաստությունը, տարածվածության աստիճանը, տարածվածությունն ըստ առավելագույն խորության, արմատների խտությունը յուրաքանչյուր գենետիկական հորիզոնում, չափսերը և այլն: Արձանագրվել է, որ առկա է ճմաշերտ, որտեղ արմատները կազմում են շերտի 50%-ից ավելին, որտեղ արմատների ցանցը հիմնականում տարածվում է 0-30 սմ-ում, իսկ առանձին բույսերի արմատներ ներթափանցում են ավելի խորը շերտերը մինչև С հորիզոն:

Հողաշերտում նորագոյացումների ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս ոչ միայն պարզաբանելու հողում ընթացող ներկայիս պրոցեսները, այլև նկարագրելու հողառաջացման պատմական պրոցեսները: Նորագոյացումների բնույթով առաջին հերթին կարելի է պատկերացում կազմել իյուվիալ հորիզոններում կուտակված նյութերի քիմիական կազմի մասին: Միաժամանակ դրանք հանդիսանում են այն պայմանների ինդիկատորները, որոնց դեպքում զարգացել են հողերը: Նորագոյացումների հետքեր ու «մասնիկներ», այդ թվում որդերի, միջատների և այլ կենդանիների մնացորդներ գրեթե չեն նկատվել: Ի տարբերություն նորագոյացումների՝ հողի ներամփոփումները գենետիկորեն կապված չեն հողային հորիզոնների հետ, վերջիններս դրսից մուտք գործած մարմիններ են, պատահական առարկաներ, որոնք ընկած են հողի մեջ: Ներամփոփումների թվին դասվում են ցամաքային կենդանիների ոսկորները, գլաքարերը, խիճը, մոխրի և ածխի մնացորդները: Մարդածին ներամփոփումների առկայությունը (կերամիկա, ապակի, ոսկոր և այլն) խոսում է նրանց վրա գոյացած հողերի երիտասարդ լինելու մասին: Արձանագրվել են հազվադեպ

հանդիպող հողի ներամփոփումներ, որոնք հիմնականում գտնվում են հողի վերին շերտում կամ մակերեսի վրա:

Հողի խոնավությունը պայմանավորված է ոչ միայն հողում առկա ջրի քանակով, այլ նաև մեխանիկական կազմով և հումուսի պարունակությամբ: Ուսումնասիրված տարածքի հողաշերտը բնութագրվում է որպես թեթև խոնավացված՝ որի դեպքում ձեռքը սառչում է, փոշիացված չէ, իսկ չորանալու դեպքում հողի գույնը համեմատաբար բաց երանգ է ստանում:

Աչքի են ընկնում միջին քարքարոտությամբ և բավականին բարձր ջրանցիկությամբ:

Ուսումնասիրվող տարածքի էրոզացվածության աստիճանի գնահատման համար կատարվել են վիզուալ դիտարկումներ ուսումնասիրելով հողաշերտի տարբեր հորիզոնների հզորությունները (մասնավորապես հորիզոնների գունային փոփոխությունները): Հողի էրոզացվածության աստիճանը գնահատվել է թույլ էրոզացված՝ քանի որ տեղատարված է A հորիզոնի կեսից քիչը կամ հողի ողջ կտրվածքի մինչև 30%-ը, նկատվում է գույնի աննշան փոփոխություն (հողի գույնը դառնում է ավելի բաց):

Նկատելի է վերին հորիզոններում կնձիկահատիկային, իսկ միջին հորիզոններում՝ ընկուզանման-կնձկային ստրուկտուրա:

Այս հողերն առանձնանում են միջին հորիզոնների բավականին կավայնացմամբ և տիղմի բարձր քանակությամբ, քան վերին հումուսակուտակման հորիզոնը, հումուսի քանակի ըստ խորության աստիճանական նվազումով, դարչնագույն գունավորմամբ, որը լանջի թեքությանը զուգընթաց ստորին հորիզոններում փոխվում է բաց շագանակագույնի: Հումուսացվածությունը գնահատվում է միջին, իսկ կարբոնատների պարունակությունը բավականաչափ:

Հողաշերտի հզորությունը հիմնականում գնահատվում է որպես սակավազոր, սակայն տարածքի թեքության նվազման զուգընթաց նկատվում է հողի հզորության մեծացում:

6. ՆԱԽԱԳԾՎՈՂ ՏԱՐԱԾՔԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Նախագծվող տարածքը ամբողջովին մտնում է Զերմուկի անտառոտնտեսության անտառային հողերի կազմի մեջ և գտնվում է Զերմուկ քաղաքի հարևանությամբ՝ լանջի վրա: Տարածքը կազմում է 6,5 հա, ամբողջական է: Ներկայացված տարածքը մոտակա

բնության հատուկ պահպանվող տարածքի՝ Ջերմուկ ջրաբանական արգելավայրի հետ չի համընկնում: Նաև մոտեցման ուղիները չեն անցնում արգելավայրի տարածքով: Ինչպես ցույց են տալիս հողի մակերեսի ակոսները նախկինում այստեղ կատարվել է անտառապատման փորձ: Դա են վկայում նաև տեղ-տեղ պահպանված սոճիները, վայրի պտղատունները, թփերը:

Հատված	Մակերես, հա	կազմը	լանջ	ԾՄԲ, մ
28	6,8	բացատ	ՀՎ-ԱԼ-15	2250
37	0,5	10Ս	ՀՎ-ԱՄ-5	2225
38	3,5	10Ս	ՀՎ-ԱՄ-10	2225
41	0,4	10Ս	ՀՎ-ԱՄ-10	2220
42	0,3	10Ս	ՀՎ-ԱՄ-10	2225

Տարածքի թեքության աստիճանը տատանվում է 10-15⁰: Առկա է բարձր խոտածածկը հացազգի խոտերի մասնակցությամբ, առկա են նաև մարգագետնային խոտածածկի էլեմենտները: Տարածքը ներկա պահին չի օգտագործվում որպես արոտավայր և խոտհարք, գրեթե քայքայված չէ, թույլ էրոզացված է, քանի որ տարածքի վերին հատվածում առկա է անտառաշերտ բաղկացած սոճուց: Ըստ անտառկառավարման պլանի այդ անտառտեղամասերը հատկացված են անտառապատման համար: Անտառափտանելիության կարգը II-III է: Քարքարոտության և մայր ապառների ելքը շուրջ 25%- է: Տարածքում հիդրոգրաֆիկ ցանցի հատվածներ չկան:

Նախագծվող հատվածը գտնվում է հայտնի «Եղնիկի» արձանի հարևանությամբ, որն ի դեպ նաև քաղաքի զինանշանի գլխավոր սիմվոլն է, տեսանելի է Ջերմուկ քաղաքից, հետևաբար ունի նաև գեղագիտական նշանակություն:

7. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

Նշված անտառամասերում ըստ «Վայոց Ձորի անտառտնտեսություն» մասնաճյուղի անտառկառավարման պլանի նախատեսված է անտառապատում: Տնկման աշխատանքները կատարվելու են խրամատներով, որն ըստ գիտական տվյալների ավելի երկար է պահում խոնավություն, և բույսերի պահպանվածությունը լինում է ավելի բարձր՝ համեմատած փոսերով տնկման դեպքում: Խրամատների խորությունը սահմանվում է մոտ 40-50 սմ, երկարությունը՝ 10,0 մ և 2,0 մ միջխրամատային հեռավորությամբ: 1 հա վրա խրամատների երկարությունը կազմելու է 3330 գծ. մ.: Խրամատները փորվելու են տեխնիկայի՝ ակոսահան տրակտորի միջոցով, հողի կուտակումը նախատեսվում է անմիջապես խրամատի երկայնքով, տնկման

գործընթացի ժամանակ հողի հետուցումը կիրականացվի ձեռքով: Արտադրական հրապարակում (տնկման նախատեսված տարածքում) օգտագործվող տեխնիկան կլինի սարքին, թույլ չի տրվի քսայուղերի և վառելիքի արտահոսք:

Նախագծվող հատվածում անտառվերականգնման համար օգտագործվելու են հետևյալ տեսակները, որոնք համապատասխանում են ծառաթփատեսակների գործող սանդղակին (աղ. 1) (Խուրշուղյան 1976):

Բերվում են կից ծառատեսակների խառնման և տեղաբաշխման սխեման: Միջշարքային հեռավորությունը սահմանվում է 3,0 մ, միջբույսային հեռավորությունը 1,0 մ: 1,0 հա վրա բույսերի թիվը կազմում է 3330 հատ: Անտառապատման հատվածը 6,5 հա և ընդհանուր քանակը տնկանյութի կազմելու է 21645 հատ: 1 հեկտարի հաշվով ըստ սխեմայի N 1 33% վայրի պտղատուներ, 34% լայնատերև սաղարթավոր տեսակներ, 33% սոճի: Ի դեպ տարածքում առկա են պահպանված սոճու անտառային սոճուց ձևավորված շերտեր, որոնք ունեն բավարար սանիտարական վիճակ և աճի տեմպ:

Լայնատերև և վայրի պտղատու տնկիների բարձրությունը չպետք է գերազանցի 70-80 սմ, իսկ սոճու տնկանյութը՝ 20-30 սմ: Տնկանյութը պետք է ունենա տեսակին համապատասխանող տեսք, չունենա մեխանիկական վնասվածքներ, լինի առողջ:

Դաշտ տեղափոխված տնկանյութը հարկ է տնկել 1-2 օրվա ընթացքում՝ հեռացնելով եթե կան, վնասված արմատները և վերգետնյա մասը: Խիստ վնասված նմուշները չեն օգտագործվում: Տնկման աշխատանքները հարկ է կատարել որակով և տնկումից հետո ստուգել կատարված աշխատանքի որակը: Տնկման կազմակերպումը կիրականացվի համաձայն ՀՀ Կառավարության 2013թ հունիսի 27-ի թիվ 684-Ն որոշման պահանջների:

Նախատեսվում է տնկման աշխատանքներում որպես աշխատուժ ներգրավել 10 մարդ 20 օր (նոյեմբերի 1-20) ժամանակահատվածի համար՝ համաձայն տնկման նորմաների:

Դաշտային աշխատանքների ընթացքում կտեղադրվի բիոզուգարան, իսկ խմելու ջուրը կապահովվի գործարանային շտաբից տարաներով:

Դաշտային աշխատանքները պետք է կատարվեն ըստ նախատեսված սխեմայի, շեղման տոկոսը, կախված ռելիեֆից, չպետք է գերազանցի 20%:

Ցանկապատում նախատեսված չէ, քանի որ կենդանիների արածեցում չի իրականացվում, իսկ տարածքը պահպանվում է «Հայանտառ» ՊՈԱԿ-ի «Վայոց ձորի անտառտնտեսություն» մասնաճյուղի կողմից:

Լայնատերև սաղարթավոր տեսակների կազմի մեջ նախատեսվում են՝ կաղնի խոշորառէջ, հացենի սովորական, թխկի սրատերև, թխկի բարձրլեռնային, կեչի լիտվինովի:

Տնկանյութի չափորոշիչները սահմանված են համաձայն՝ ԳՈՍՏ 3317-90-ի տնկանյութին ներկայացվող պահանջներին համապատասխան: Տնկանյութի որակական հատկանիշները համաձայնեցված են «Վայոց Ձորի անտառտնտեսություն» մասնաճյուղի համապատասխան մասնագետների հետ:

Տնկանյութի ձեռքբերումը նախատեսված է /պայմանագրերի պատճենները կցվում են/ երեք տնկարաններից՝



- Ղիմոյան Համլետ, Անձնագիր AR0435019, Տրված 23.08.2017թ., 043
- Սարգսյան Արարատ, Անձնագիր AR0492936, Տրված 25.10.2017թ., 020
- Սարգսյան Հայկ, Անձնագիր AR0617228, Տրված 07.03.2018թ., 020

ԱՆՏԱՌԱՊԱՏՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՏԵՍԱԿԱՇԱՐ

Ծառատեսակներ	Կիրառման ինտենսիվությունը
Արոսենի ամոքիչ	+
Արոսենի սովորական	++
Թխկի բարձրլեռնային	++
Խնձորենի արևելյան	++
Կաղնի ամառային	++
Կաղնի արևելյան	++
Կեչի Լիտվինովի	++
Կեռասենի անտառային	++
Հացենի կանաչ	++
Հացենի սովորական	++
Սալորենի չոված	++
Սոճի կովկասյան	++
Տանձենի կովկասյան	++

+ - կիրառման ինտենսիվությունը

ՍԽԵՄԱ N 1



- × - սոճի կոճկասյան 1110 հատ/հա
- - լայնատերև 1110 հատ/հա
- ⊗ - պտղատու 1110 հատ/հա

Անտառմշակույթների հիմնադրաման սխեմա

8. ԽՆԱՄՔԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Տնկարկի կաչողականության և պահպանվածության համար որոշիչ նշանակություն ունի խնամքը, հատկապես բարձրախտային խտտածածկի առկայությամբ:

Նախատեսվում է 5 տարվա ընթացքում իրականացնել ագրոտեխնիկական խնամք, քաղհան, փխրեցում, խոտհունձ:

1-ին տարի – 5 անգամ

2-րդ տարի – 4 անգամ

3-րդ տարի – 3 անգամ

4-րդ տարի – 2 անգամ

5-րդ տարի – 1 - 2 անգամ, (ըստ խոտի աճի):

Խոտհունձ իրականացվում է ըստ անհրաժեշտության՝ միայն միջշարքային տարածություններում:

Անհրաժեշտ է պարբերաբար ստուգել բույսերի սանիտարական վիճակը և հիվանդության կամ վնասատուներ հայտնաբերելու ժամանակ ահազանգել համապատասխան կազմակերպությանը: Շատ չորային տարիներին առաջարկվում է իրականացնել մասնակի ոռոգում /7-8լ մեկ տնկիի հաշվով/: Ոռոգման աշխատանքների պատշաճ կազմակերպման նպատակով «Զինջ Արփա» ՍՊԸ-ն կնքել է ծառայությունների մատուցման պայմանագիր **/պայմանագրի պատճենը կցվում է/:**

9. ԼՐԱՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Բնության մեջ երբեք հնարավոր չէ բարձր լեռնային աճման ծանր պայմաններում ապահովել 100% կաչողականություն: Կաչողականությունը որոշելու նպատակով տարվում է հաշվարկ: 75-80% կաչողականության պայմաններում լրացման աշխատանքներ չեն իրականացվում, ավելի ցածրի դեպքում լրացումը կատարվում է այն տեսակով, որը անկում է ապրել:

10. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հիմնական բնապահպանական ռիսկերը

- Աշխատանքների արդյունքում կենդանիների կենսապայմանների ձևափոխություններ,
- Փոշու արտանետումներ և տարածում շրջակա միջավայրում՝ տեխնիկայի աշխատանքի արդյունքում,
- Անտառի որակական ցուցանիշների փոփոխություն, ինվազիվ բույսեր,
- Ջրային էռոզիա,
- Արոտներ,
- Օդային հոսանքների նվազեցում, ուղղության փոփոխություն,
- Վառելիքի այրման արգասիքների արտանետումներ,

- Տեխնիկայի շահագործման և կայանման ընթացքում վառելիքի և քայուղերի արտահոսքեր,
- Տեխնիկայի, ավտոտրանսպորտային միջոցների աշխատանքի ընթացքում առաջացող աղմուկ,

Ազդեցությունը կրող հիմնական սուբյեկտները

Ա. Շրջակա միջավայրի տարրերը, այդ թվում՝

- Օդային ավազան,
- Մակերևութային ջրեր,
- Անտառային էկոհամակարգ,
- Հողային ռեսուրսներ,
- Կենսաբազմազանություն,

Բ. Բնակչությունը և նրա կենսաապահովման տարրերը՝

- Բնակչության կենսակերպ,
- Տնտեսական գործունեություն,
- Ենթակառուցվածքներ,
- Պատմամշակութային արժեքներ:

11. ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆԸ/ԲԱՑԱՌՄԱՆԸ ԵՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Անտառի տնկարկի հիմնումը շրջակա միջավայրի վրա վնասակար ազդեցություն կարող է ունենալ այսպիսի պատճառներով, ինչպիսիք են՝

1. արոտավայրերի քանակի կրճատման պատճառով մնացած արոտավայրերի ծանրաբեռնվածության ավելացումը, սակայն հարկ ենք համարում նշել, որ տարածքը հարակից է Ջերմուկի առողջարանային գոտուն, և այստեղ անասնապահությամբ զբաղվողներ գրեթե չկան: Կարելի է փաստել, որ անտառտնկարկի հիմումը էականորոն չի ավելացնելու մնացած արոտների ծանրաբեռնվածությունը: Նախ ընտրված տարածքը հարմար չէ արածեցման համար, քանի որ շրջափակված է անտառներով և այլ համայնքային և մասնավոր գյուղատնտեսական տարրեր նշանակության հողատեսքերով, և տվյալ տարածքին մոտենալու համար կենդանիները վնասում են այդ էկոհամակարգերը: Տարածքում նախատեսվող ծառուտում կլինեն պտղատու-հատապտղատու տեսակներ, որոնք լրացուցիչ կերային բազա կլինեն կենդանական

աշխարհի համար, ինչպես նաև տնկարկը կհանդիսանա թաքստոց, բնադրման և սովեր ապահովող վայր:

2. տնկիների կազմում տվյալ տարածքի համար ինվազիվ բույսերի ներառված լինելը, որոնք կարող են բացասաբար անդրադառնալ հարակից կենսաբազմազանության վրա: Այս պատճառը հնարավոր է ի սկզբանե բացառել՝ անտառնշակույթի հիմնադրման համար տնկիների կազմում չներառելով ինվազիվ բույսեր: Տվյալ դեպքում, որպես հիմնական տեսակ ընտրված է սոճի, իսկ որպես ուղեկցող տեսակ՝ կաղնի և պտղատու տեսակներ, որոնք շատ հարմար են տվյալ տարածքի բուսականության հետ համակեցություն ձևավորելու առումով:

3. տնկիների կաչողունակության 60 տոկոսից պակաս լինելը, ինչի հետևանքով հատկապես դատարկ մնացած խրամատները կարող են խթանել ջրային էրոզիայի առաջացումը: Անտառտնկման համար հողային պայմանները թեև նպաստավոր են, տեղումային ջրերը հնարավորինս արդյունավետ օգտագործելու նպատակով անհրաժեշտ է ապահովել, որ տնկիների խրամատների մեջ հնարավորինս շատ ջուր կուտակվի: Այդ նպատակով տնկումն իրականացվելու է այնպես, որ տնկիների արմատավզիկները հողով ծածկելուց հետո խրամատը կամ փոսը ջուր կուտակելու համար ունենա 3-5 սմ խորություն: Բացի այդ, բուսածածկ հողաշերտի կտորները տեղադրվելու են խրամատների կամ փոսերի ստորին եզրի երկայնքով՝ ունենալով պատնեշի դերակատարում: Նախատեսվել է նաև ոռոգման իրականացում չորային ժամանակահատվածներում՝ տնկիների կաչողականության ապահովման համար, այդ նպատակով կնքվել է ծառայությունների մատուցման պայմանագիր /կցվում է/:

Մթնոլորտային օդ

Մթնոլորտային օդի աղտոտող հիմնական նյութերը փոշին է և շահագործվող տեխնիկա-տրանսպորտային միջոցների առաջացրած ծխազազերը և գազային արտանետումները: Տարածքը հարակից է Ջերմուկի առողջարանային գոտուն, այստեղ նման երևույթներ գրեթե չեն նկատվում:

Մակերևութային և ստորգետնյա ջրեր

Տարածքում իրականացվող անտառվերականգնման արդյունքում էրոզիոն պրոցեսները կնահանջեն, կգոյանա ծածկույթ, որը կապահովի խոնավության պահպանումը հողաշերտում:

Հող

ՀՀ կառավարության 08 09 2011թ. 1396-Ն որոշմամբ սահմանվում է օգտահանված բերրի հողի նպատակային և արդյունավետ օգտագործման հետ կապված հարաբերությունները: Համաձայն այդ որոշման, այն առաջնային կարգով կիրառվում է խախտված հողերի ռեկուլտիվացման նպատակով:

Հողաձածկույթի աղտոտումը վառելիքաքսուկային նյութերով կանխելու նպատակով տեխնիկա-տրանսպորտային միջոցները պետք է շահագործվեն սարքին վիճակով՝ բացառելու համար վառելիքի և յուղի պատահական արտահոսքը:

Հողի աղբոտումը կանխելու նպատակով արտադրական հարթակում և աշխատակիցների հանգստյան վայրերում տեղադրվում են աղբամաններ:

Բուսական և կենդանական աշխարհ

Բուն տարածքում ՀՀ կարմիր գրքում գրանցված բույսերի և կենդանիների տեսակներ չեն արձանագրվել:

Աշխատանքների բացասական ազդեցությունը տարածքի բուսական և կենդանական աշխարհի վրա պայմանավորված է խոտաբուսական ծածկույթի խախտման հետ:

Տնկարկը կարող է սննդի աղբյուր հանդիսանալ վայրի կենդանիների և թռչունների համար, քանի որ նախատեսված են պտղատու տեսակներ:

Տարածքում կենդանիների բներ, որջեր չեն դիտարկվել, բացառությամբ մկնանման կրծողների:

Բացառվում է տեխնիկա-տրանսպորտային միջոցների երթևեկությունը ճանապարհներից և արտադրական տարածքներից դուրս:

Պատմամշակութային արժեքներ

Հայցվող տարածքը պատմամշակութային գրանցված կոթողներից գտնվում է նվազագույնը 1-2 կմ հեռավորության վրա, ուստի ոչ մի բացասական ազդեցություն անտատառունկման ընթացքում չի սպառնում:

Սոցիալական ազդեցություն

Աշխատանքները նախատեսվում է կատարել ՀՀ աշխատանքային օրենսդրության պահանջներին, աշխատանքների անվտանգության նորմատիվային փոստաթղթերին և այլ նորմատիվ ակտերին համապատասխան և ապահովեն բոլոր տեսակի

աշխատանքների անվտանգ կատարումը: Աշխատատեղերում, հասանելի վայրում, կլինեն առաջին օգնության բժշկական արկղիկներ և հակահրդեհային միջոցներ: Աշխատակազմը կապահովվի համազգեստով և անվտանգության անհրաժեշտ միջոցներով:

Անվտանգության սարքավորումների օգտագործումը կուսուցանվի, կվերահսկվի և կպարտադրվի: Աշխատանքի անվտանգության պահպանման համակարգը կնախատեսի հրահանգավորում, ուսուցում և գիտելիքների ստուգում:

Ֆիզիկական ազդեցությունները /օրինակ՝ աղմուկը/ կանխելու նպատակով տեխնիկատրանսպորտային միջոցները կունենան համապատասխան խլացուցիչներ: Բոլոր աշխատակիցները կապահովվեն անհատական պաշտպանության միջոցներով:

Սպասարկող անձնակազմի ընտրության ժամանակ առաջնահերթություն է տրվելու տեղի բնակչությանը:

Բնության հուշարձաններ

Անտառտնկարկի տարածքներում բնության հուշարձաններ ընդգրկված չեն: ՀՀ կառավարության 2008 թ. Օգոստոսի 14-ի N 967-Ն որոշմամբ սահմանվել է ՀՀ բնության հուշարձանների ցանկը, որը ներկայացված է հավելվածում:

Բնապահպանական մշտադիտարկումների պլան

Շրջակա միջավայրի մշտադիտարկումը /էկոլոգիական մոնիթորինգը/ շրջակա միջավայրի, այդ թվում շրջակա միջավայրի բաղադրիչների, բնական էկոլոգիական համակարգերի, նրանցում ընթացող գործընթացների, դրական և բացասական տեղաշարժերի, իրավիճակի համալիր դիտարկում է, որը թույլ է տալիս գնահատել և կանխատեսել շրջակա միջավայրի վիճակի փոփոխությունները:

Մշտադիտարկման նպատակներն են. շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումը և նորմավորումը, ազդեցության աղբյուրների վերահսկումը /արտանետումները, ֆիզիկական ազդեցությունը, մնացորդային ազդեցությունը, վտանգները/, շրջակա միջավայրի բաղադրիչների որակի վերահսկողությունը: Այս ամենը անհրաժեշտ է ազդակիր համայնքների բնակչության անվտանգության և առողջության, աղետների կանխման և կանխարգելման միջոցառումների մշակման, ռացիոնալ բնօգտագործում և բնապահպանությունն ապահովելու համար:

Մշտադիտարկման պլանը հստակեցնում է դիտարկման օբյեկտը /տեղամասը/, չափվող կամ վերահսկվող պարամետրը, նրա թույլատրելի սահմանը, չափման կամ վերահսկման մեթոդը, հաճախականությունը և այլն:

Մշտադիտարկումը իրականացվում է շրջակա միջավայրի բոլոր բաղադրիչների նկատմամբ՝ մակերևույթային և ստորգետնյա ջրեր, մթնոլորտային օդ, հողեր, կենսաբազմազանություն, ֆիզիկական ազդեցություններ և այլն:

Եթե չափված պարամետրերը գերազանցում են ցույց տալիս կամ զարգացման դինամիկ միտում, ապա պարզվում են այդ գերազանցումների պատճառները, ճշտվում են հակազդեցության գործողությունները, միջոցները, և վերացվում են խախտումները՝ նախատեսված միջոցառումներին համապատասխան:

Շրջակա միջավայրի իրավիճակի մասին տեղեկատվությունը, որը ստանում ենք էկոլոգիական մշտադիտարկման արդյունքում, թույլ է տալիս կանխարգելել կամ նվազեցնել շրջակա միջավայրի վրա նախաձեռնության ազդեցությունը, պլանավորել տարածաշրջանի բնապահպանական իրավիճակը և համապատասխան հետևություններ անել տարածաշրջանի կայուն զարգացման բնագավառում:

Տեղական բնապահպանական մշտադիտարկման արդյունքներով հետևություններ են անում տվյալ նեղ տարածաշրջանի, ազդակիր համայնքի սահմաններում, շրջակա միջավայրի, մարդու բնակության և գործունեության միջավայրի վրա համալիրի ազդեցության մասին: Շրջակա միջավայրի մշտադիտարկման արդյունքները պետք է անհապաղ հրապարակվեն հասարակության և պետական լիազոր մարմինների համար ընդունելի ձևաչափով:

Ց Ա Ն Կ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԲՆՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ

Երկրաբանական հուշարձաններ

1	«Բլրաբերդ» հրաբխային գմբեթ	Վայոց ձորի մարզ, Եղեգնաձոր-Վայք ճանապարհի աջ կողմում
2	«Սատանայի աշտարակ» սյունաձև բազալտներ	Վայոց ձորի մարզ, Վայք-Ջերմուկ հին ճանապարհին, Արփա գետի կիրճում
3	«Բախտի կամար» բնական քարե թունել	Վայոց ձորի մարզ, Ջերմուկ քաղաք, Արփա գետի կիրճում
4	«Անանուն» որմնաքանդակներ	Վայոց ձորի մարզ, Երևան-Գորիս խճուղու ձախ կողմում, Ջերմուկ տանող ճանապարհից 44 մ դեպի Գորիս
5	«Անանուն» լավային ծալքեր	Վայոց ձորի մարզ, Ջերմուկ քաղաքից 5 կմ հվ-արլ
6	«Վարդան Մամիկոնյան» քարե քանդակ	Վայոց ձորի մարզ, Կեչուտի ջրամբարից 2 կմ հվ, Արփա գետի կիրճում, Վայք-Ջերմուկ հին ճանապարհին
7	«Ցիցքար» ժայռագագաթ	Վայոց ձորի մարզ, Վայք քաղաքից 0.5 կմ հս-արմ
8	«Տորք Անգեղ» քարե քանդակ	Վայոց ձորի մարզ, Ագարակաձոր գյուղից 1.5 կմ հվ-արլ, Անապատե վայրում
9	«Սֆինքս» քարե քանդակ	Վայոց ձորի մարզ, Ագարակաձոր գյուղ, Գրավ գետի կիրճում
10	«Սպիտակ քար» ժայռ-մնացուկ	Վայոց ձորի մարզ, Աղավնաձոր գյուղից 3 կմ հս-արմ, Աղավնաձոր-Ելփին ճանապարհի աջ կողմում
11	«Անանուն» տեկտոնական խախտում	Վայոց ձորի մարզ, Արենի գյուղի արլ մասում, Արփա գետի ձախ ափին
12	«Պահակային աշտարակ», էրոզիոն ժայռ-մնացուկ	Վայոց ձորի մարզ, Վայք-Ջերմուկ հին ճանապարհին, Արփա գետի կիրճում, Գնդեվազ գյուղի դիմաց
13	«Անանուն» դայկա	Վայոց ձորի մարզ, Գնդեվազ գյուղից 1-1.5 կմ հս-արլ, Արփա գետի կիրճում, Վայք-Ջերմուկ հին ճանապարհին
14	«Անանուն» դայկաներ	Վայոց ձորի մարզ, Գնդեվազ գյուղից 4 կմ հս-արլ, Արփա գետի կիրճում, Վայք-Ջերմուկ հին ճանապարհին
15	«Անանուն» սյունաձև անջատմամբ բազալտներ	Վայոց ձորի մարզ, Գոմք գյուղի հս-արլ մասում, ձորակի աջ կողմում
16	«Անանուն» դայկա	Վայոց ձորի մարզ, Ելփին գյուղի հվ եզրին
17	«Անանուն» խզվածքային կառուցվածք	Վայոց ձորի մարզ, Ելփին գյուղի արմ ծայրամասում
18	«Անանուն» քարե քանդակներ	Վայոց ձորի մարզ, Խնձորուտ գյուղից 2.0 կմ հս, Ջառիթափ-Խնձորուտ ավտոճանապարհի երկու կողմում
19	«Վայոցսար» (Դալիկ) հրաբուխ	Վայոց ձորի մարզ, Կարմրաշեն գյուղից 3.0 կմ հվ-արմ
20	«Անանուն» լավային հոսք	Վայոց ձորի մարզ, Շատին գյուղից 0.5 կմ արլ
21	«Անանուն» դայկայանման մարմին	Վայոց ձորի մարզ, Վերնաշեն գյուղից հս
22	«Գետիկվանքի» բրածո ֆլորա	Վայոց ձորի մարզ, Գետիկվանք գյուղից 3 կմ հս-արլ, 2240 մ բարձրության վրա
23	«Ազատեկի» բրածո ֆլորա	Վայոց ձորի մարզ, Ազատեկ գյուղի մոտ

Ջրաերկրաբանական հուշարձաններ

1	«Ջերմուկի» աղբյուրներ	Վայոց ձորի մարզ, Ջերմուկ առողջարանի տարածքում, ծ.մ-ից 2140 մ բարձրության վրա
2	«Յոթաղբյուր» աղբյուր	Վայոց ձորի մարզ, Ջերմուկ քաղաքից 10 կմ հս-արլ դեպի Ալ լիճ տանող ճանապարհին, Ջերմուկի հրաբխային պլատոյի վրա, ծ.մ-ից 2610 մ բարձրության վրա
3	«Գրավի» աղբյուր	Վայոց ձորի մարզ, Աղավնաձոր գյուղից 5 կմ հվ, Գրավ գետի հովտում, ծ.մ-ից 1630 մ բարձրության վրա
4	«Պարույր Սևակ» աղբյուր	Վայոց ձորի մարզ, Աղավնաձոր գետի վերին հոսանքում, ծ.մ-ից 1985 մ բարձրության վրա
5	«Արտաղբյուր» աղբյուր	Վայոց ձորի մարզ, Եղեգիս գյուղից 2.7 կմ հս-արլ, Եղեգիս գետի աջ ափին, ծ.մ-ից 1840 մ բարձրության վրա
6	«Ջրովանք» աղբյուր	Վայոց ձորի մարզ, Արփի գյուղից 3 կմ հվ-արլ, Արփա գետի ձախ վտակ Ջրովանք գետակի ակունքում, ծ.մ-ից 1345 մ բարձրության վրա
7	«Առնետի» աղբյուր	Վայոց ձորի մարզ, Խաչիկ գյուղից 3 կմ հս-արլ, ծ.մ-ից 1780 մ բարձրության վրա
8	«Բազմաղբյուր» աղբյուրներ	Վայոց ձորի մարզ, Հերիեր գյուղի մոտ, ծ.մ-ից 1508 մ բարձրության վրա
9	«Մոզ» աղբյուր	Վայոց ձորի մարզ, Մալիշկա գյուղից 2.5 կմ արլ, Արփա գետի կիրճի աջ ափին, ծ.մ-ից 1170 մ բարձրության վրա

Ջրագրական հուշարձաններ

1	«Հովվալիճ»	Վայոց ձորի մարզ, Ջերմուկ քաղաքից մոտ 15 կմ հս, Արփա գետի աջ վտակի վերին հոսանքում
2	«Բարձրունի» լիճ	Վայոց ձորի մարզ, Բարձրունի գյուղից 3 կմ արլ, ծ.մ-ից 2760 մ բարձրության վրա
3	«Հայելի» լիճ	Վայոց ձորի մարզ, Արտավան գյուղից 2 կմ արլ, ծ.մ-ից 2100 մ բարձրության վրա
4	«Անանուն» լիճ	Վայոց ձորի մարզ, Կապույտ գյուղից 3 կմ հվ-արլ, ծ.մ-ից 2150 մ բարձրության վրա
5	«Սրբալիճ» լիճ	Վայոց ձորի մարզ, Մարտիրոս գյուղից 0,5 կմ արլ, ծ.մ-ից 1937 մ բարձրության վրա
6	«Մարտիրոս» լիճ (Վերին լիճ)	Վայոց ձորի մարզ, Մարտիրոս գյուղից 1,5 կմ արլ, ծ.մ-ից 2145 մ բարձրության վրա
7	«Ջերմուկ» («Ցոլք») ջրվեժ	Վայոց ձորի մարզ, Արփա գետի աջակողմյան Ջերմուկ վտակի վրա
8	«Քարավազ» ջրվեժ	Վայոց ձորի մարզ, Հերիեր գետի աջակողմյան վտակի վրա, Կարմրաշեն գյուղից 2 կմ արլ
9	«Հերիեր» ջրվեժ	Վայոց ձորի մարզ, Հերիեր գետի վրա, համանուն գյուղից 2.5 կմ հս
10	«Գետիկվանք» ջրվեժ	Վայոց ձորի մարզ, Եղեգիս գետի աջակողմյան վտակի վրա, Կարդահովիտ գյուղից 0.5 կմ արմ

Կենսաբանական հուշարձաններ

1	«Կորնգան եղջյուրավոր»	Վայոց ձորի մարզ, Վարդենյաց լեռնանցք, Աղնջաձոր գյուղից 3 կմ հս-արմ
---	-----------------------	---

Բնապատմական հուշարձաններ

1	«Սմբատասար» բնապատմական համալիր	Վայոց ձորի մարզ, Արտաբույնք գյուղից 0.75 կմ արլ
2	Պռոշաբերդի բնապատկերներ	Վայոց ձորի մարզ, Գլաձոր գյուղից 6 կմ հս
3	«Բերդի գլուխ» ամրոցի հրվանդան	Վայոց ձորի մարզ, Գնդեվազ գյուղի հս-արմ եզրին
4.	Վարդանես լճի համալիր	Վայոց ձորի մարզ, Ելփին գյուղից 3.5-4 կմ հս-արլ, նախկին Վարդանես գյուղի ավերակների մոտ, ծ.մ-ից 1748 մ բարձրության վրա
5	«Սուրբ Գևորգ» աղբյուրների խումբ	Վայոց ձորի մարզ, Հերիեր գյուղի հվ մասում, Հերիեր գետի աջ ափին
6	Մարտիրոս գյուղի բնապատմական համալիր	Վայոց ձորի մարզ, Մարտիրոս գյուղից 2.0 հվ-արլ, Նգար լեռան արմ լանջին